

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

«08» ապրիլի 2014թ. N 61-Ա

«08» ապրիլի 2014թ. N 128-Ա

ՄԱՐԶԱՅԻՆ (ՏԵՂԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ  
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի  
18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով հաստատված հավելվածի 136-րդ կետի 13-րդ ենթակետով,  
ինչպես նաև ճանապարհային ցանցի սպասարկման համակարգման նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Ն Ք


Հաստատել՝

1. Մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտի պատասխանատու մասնագետներին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ



ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատար 2014 թվականի ապրիլի 2-ի N 61-Ա և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի պաշտոնակատար 2014 թվականի ապրիլի 2-ի N 10-Ա համապատասխան հրման



ԿԱՐԳ

ՄԱՐԶԱՅԻՆ (ՏԵՂԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է ճանապարհային ոլորտում առավել արդյունավետ գործունեության իրականացման համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունների համագործակցությունը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, մարզպետարանների աշխատակազմերի տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտի պատասխանատու մասնագետների կարողությունների զարգացման և բյուջետային հայտերի ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Բյուջետային գործընթացի հայտերը, ճանապարհային բնագավառի մասով, Հայաստանի Հանրապետության մարզպետների (այսուհետ՝ մարզպետ) կողմից յուրաքանչյուր տարի տրամադրվում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հաստատված բյուջետային գործընթացի (ՄԺԾԾ և բյուջետային հայտերի ներկայացման) իրականացման ժամանակացույցով հաստատված ժամկետից, ոչ ուշ քան երկու ամիս առաջ:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հաստատված բյուջետային գործընթացի (ՄԺԾԾ և բյուջետային հայտերի ներկայացման) իրականացման ժամանակացույցով հաստատված ժամկետից, ոչ ուշ քան երկու ամիս առաջ մարզպետի կողմից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն է ներկայացվում տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետության մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների վերաբերյալ՝ համաձայն Ձև 1 և Ձև 2-ի:

4. Մարզպետարաններից ստացված տեղեկատվությունը ուսումնասիրվում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից և դիտողությունների ու առաջարկությունների առկայության դեպքում 10 օրյա ժամկետում դրանք ներկայացվում են մարզպետներին, իսկ պատճենը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը:

5. Մարզպետարաններից ստացված տեղեկատվությունները ամփոփվում են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից և ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ճանապարհային ոլորտը համակարգող խորհրդի քննարկմանը:

6. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը պարբերաբար կազմակերպում է դասընթացներ մարզպետարանների աշխատակազմերի տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտի պատասխանատու մասնագետների կարողությունների զարգացման նպատակով:



« փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատար 2014 թվականի ...-ի №... -Ա  
և « տրանսպորտի, մասի նախնարարի պաշտոնակատար 2014 թվականի ...-ի №... -Ա

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտի պատասխանատու մասնագետներին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտի ղեկավար պաշտոն (ստորաբաժանման ղեկավար, ստորաբաժանման ղեկավարի տեղակալ) զբաղեցնելու, ինչպես նաև ստորաբաժանման ինժեներական անձնակազմի պաշտոններից մեկը զբաղեցնելու համար պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ ոլորտին առնչվող մասնագիտությունների գծով, մասնավորապես՝ տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում, փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում և այլն:

2. Մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտի ստորաբաժանման ղեկավարը պատասխանատու է բնագավառը կարգավորող «Օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված գործառույթների իրականացման համար, մասնավորապես՝

1) մարզային (տեղական) նշանակության ճանապարհների, կամուրջների, թունելների, այլ ինժեներական կառույցների հիմնանորոգման, պահպանման և շահագործման կազմակերպում (մրցութային գործընթաց, պայմանագրերի կնքում և իրականացում և մասնակցություն ավարտված շինարարական օբյեկտների շահագործման ընդունմանը)։

2) մարզային նշանակության ճանապարհների տեխնիկական վիճակի ուսումնասիրությունների իրականացում, արդյունքների ամփոփում և հաստատված

ձևաչափերով և սահմանված ժանկետներում առաջարկությունները ներկայացնում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն.

3) մարզի տարածքում ճանապարհներին տիրող արտակարգ վիճակների և հրատապ լուծում պահանջող հարցերի պարբերաբար վերլուծում և դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

4) մարզային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրերի առաջնահերթությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

5) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ներկայացվող մարզային նշանակության ճանապարհներին առընչվող բողոքների վերաբերյալ պարզաբանումների տրամադրում.

6) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ համաձայնեցված ձևաչափով ճանապարհային ենթակառուցվածքի հաշվեկշռային մատյանի վարում.

7) և այլն:

Ա/Ճ-ի պայմանաճիշդ	Ա/Ճ-ի անվանումը	Երկարությունը, կմ	Տեղադրությունը*	Գնահատվող հատվածի ա/բ ծածկի տվյալները						Փոսերի մակերեսը, քմ	Փոսայնությունը, %	Վիճակի գնահատականը
				Լայնությունը, մ		Մակերեսը, քմ	Ծածկի տիպը (ա/բ, կոպիճ, ծածկ չկա)*	8	9			
				Սկիզբ	Վերջ							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11		
S-	Ա.Բ.Գ		կմ+ - կմ+									
			կմ+ - կմ+									
			և այլն									
			Շերտաներ՝ ա/բ, «Երաշխիքային»									
			ա/բ «լավ»									
			ա/բ «բավարար»									
			ա/բ «վատ»									
			կոպճային «Երաշխիքային»									
			կոպճային «լավ»									
			կոպճային «բավարար»									
կոպճային «վատ»												
առանց ծածկի «վատ»												
S-	Դ.Ե.Զ		կմ+ - կմ+									
			կմ+ - կմ+									
			և այլն									
S-	Շերտաներ՝ ա/բ, «Երաշխիքային»											
			ա/բ «լավ»									
			ա/բ «բավարար»									
			ա/բ «վատ»									
			կոպճային «Երաշխիքային»									
			կոպճային «լավ»									
			կոպճային «բավարար»									
			կոպճային «վատ»									
			առանց ծածկի «վատ»									

և այլն

\*յա/ կոպճային ծածկի և ծածկի բացակայության դեպքում 4-րդ սյունակում լրացվում է տվյալ ծածկի փաստացի տեղադրությունը: Օրինակ՝ կմ0+000- կմ0+450:

Լրացվում են 5,6,7,8 և 11 սյունակները: Ընդհանուր ծածկի բացակայության դեպքում 11 սյունակում պետք է նշվի զրո, զնախատվում է «վատ»:

բ/ Ա/բ ծածկի դեպքում 4-րդ սյունակը լրացվում է 1կմ-ի կտրվածքով: Օրինակ՝ կմ0+000-կմ1+000 և այլն: Լրացվում են 5-ից 11 սյունակները: Ընդ որում, 11-րդ սյունակում վիճակը գնահատվում է «երաշխիքային», «լավ», «բավարար» կամ «վատ»՝ համաձայն << կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի N1419-Ն որոշմանը հաստատված կարգի Աղյուսակ 1-ի:

ՅԱ 2

Հ/հ	Կատարման ցուցանիշ	Զախմակ		
		1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
1	Մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ պահպանման ցուցանիշ՝ երկարություն (կմ) և ճանապարհային ցանցի %			
1.2	Անտառային պահպանում, կմ	կմ		
1.3	Անտառային պահպանում, %	%		
1.4	Ձմեռային պահպանում, կմ	կմ		
1.5	Ձմեռային պահպանում, %	%		
2	Հիմնանորոգման ցուցանիշ՝ երկարություն (կմ) և ճանապարհային ցանցի %			
2.1	Մարզային նշանակության ավտոճանապարհներ, կմ	կմ		
2.2	Մարզային նշանակության ավտոճանապարհներ, %	%		
3	Վատ վիճակի ճանապարհների մասնաբաժինը			
3.1	Մարզային նշանակության ավտոճանապարհներ, կմ	կմ		
3.2	Մարզային նշանակության ավտոճանապարհներ, %	%		
4	Համայնքների տրանսպորտային կապի ցուցանիշ: Հիմնական ճանապարհային ցանցի կամ մարզվենտորոնների հետ առնվազն մեկ բավարար կամ ավելի լավ վիճակում գտնվող ճանապարհներ ունեցող բնակավայրերի մասնաբաժինը բնակավայրերի ընդհանուր թվում, %	%		
5	Ճանապարհից օգտվողների բավարարվածության ցուցանիշ			
5.1	Ճանապարհներից օգտվողների՝ ընթացիկ պահպանման միջամտություն պահանջող բողոքների %-ի փոփոխությունը (+-%)	%		
5.2	Ճանապարհներից օգտվողների՝ հիմնանորոգում պահանջող բողոքների %-ի փոփոխությունը (+-%)	%		
5.3	Ընթացիկ պահպանման միջամտություն պահանջող բողոքների բավարարման %	%		
5.4	Հիմնանորոգում պահանջող բողոքների բավարարման %	%		